

ՇԱՐՅԱԶՐՈՅՑ

«ԻՍԱՀԱԿԵԱՆՆ ՈՒՆԻ ՊԱՐՍԿԱՀԱՅ ՃԱԳՈՒՄ»

«Մասիս»ի ընթերցողներուն կը ներկայացնենք Բեհրամի մէջ հրատարակուող «Ապագայ»ի գլխաւոր խմբագիրի մտերիմ գրայցը Աւետիք Իսահակեանի թոռան՝ գրականագէտ Աւիկ Իսահակեանի հետ:

ԽՄԲ.

-Սիրելի Աւիկ նախ շնորհակալութիւն եմ յայտնում, որ զանազան զբաղմունքներով հանդերձ մեզ ընդունեցիր: Իրանահայութիւնն էլ ողջ հայ ժողովրդի նման Իսահակեանի ստեղծագործութիւնների սիրահարն է, թոյլ տուէք հենց ձեր նախաբանով սկսենք այսօրուայ գրոյցը մեծ վարպետի մասին:

-Գիտես սիրելի Գերմանիկ, իր իսահակեանի նախնիների ծագումը պատմական Հայաստանից է՝ Հին Բայազէտից, այսինքն կարելի է ասել իսահակեանը ունի պարսկահայ ծագում: 1828 թ. երբ նշանաւոր թուրքմենչալի պայմանագիրը ստորագրուեց եւ որոշում կայացաւ, որ պարսկահայութիւնը տեղափոխուի Ռուսաստանի իշխանութեան տակ գտնուող Հայաստանի տարածքը, իսահակեանի մեծ պապը՝ Նիկողայոս իսահակեանը, որ լատին մարդ էր Հին Բայազէտում, գլխաւորեց Հին Բայազէտցիների կարաւանը դէպի հայրենիք եւ կարաւանի մի մասը Հաստատուեց Գիւմրիում, իսկ մէկ մասը գնաց Սեւանի ափը եւ Հաստատուեց Փաւառ գաւառիկում: Ես ուզում եմ մի պատմութիւն պատմել: Ես հարցրեցի մեծ հօրս իսահակեանին, թէ պապիկ ուրեմն դու Գիւմրեցի ես, ես ծնուել եմ Երեւան, մայրս՝ Կոստանդնուպոլիս,

նի, Տանթէի, տարօրինակ աղպէս խառնուրդ է իսահակեանը, որը լիրաւի մեր պոէզիայի հնարաւոր սահմանների դադարն է: Գալաթին է նաեւ այն իմաստով, որ մարդկային փիլիսոփայական միտքը կանգնում է հենց միայն Արուլայա Մահարու օրինակի վրայ, նրա աղպոէմը աւելի դառնում է ժամանակակից, կարծես թէ անմահ է, որովհետեւ իսահակեանը գործ է ունեցել ոչ թէ անցողիկ հասկացողութիւնների հետ այլ մնայուն արժէքների, աղպիսին ինչպիսին է մահուան եւ կեանքի փրոպիւնը, մարդու եւ հասարակութեան փոխարարութեան փրոպիւնը, անհատի եւ իշխանութեան լաւիտենական փրոպիւնը եւ վերջապէս հայրենիքի, սիրոյ, մայրական սիրոյ, որոնց մեծագոյն սիրերգակն է ինքը եղել: Ինձ համար, ի հարկ է շատ հաճելի է գիտակցել, որ այս խօսքը եւ լեռագայում լողուածը կ'ընթերցուի մեր պարսկահայ գաղութի կողմից, որովհետեւ միշտ զդացել եմ այդ ջերմ կապը, դժբախտաբար ես չեմ եղել Պարսկաստանում, չեմ շփուել անձանց, բայց եղել եմ 1993 եւ 1996 թթ. Կլէնտէլում, որտեղ մեր պարսկահայ միութիւնը անցկացրեց մի հիանալի երեկոյ... պէտք է տեսնէիք ինչքան խանդավառուած էին պարսկահայ եղբայրները լսելով իսահակեանի լուզիչ երաժշտութիւնը, նրա բանաստեղծութիւնը: Ինձ թուում է, որ նա բոլոր հայ համայնքների վրայ ունի ազդեցութիւն, բայց աւելի, կարծես, մօտ է ընդունում պարսկահայը իսահակեանին, ինչպէս ասացի ե՛ւ հայրենակցական կապերը, ե՛ւ ինչ-որ հոգեբանական կապերը երե-

ՎԱՐՊԵՏԻՆ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

(1875-1957)

Հայ մեծաստղանդ բանաստեղծ, արձակագիր, հրատարակագիր եւ հանրային գործիչ: Յորջորջուած է ՎԱՐՊԵՏ:

Ծնած է նախկին Ալեքսանտրապոլ, այժմ Գիւմրի: Մանկութիւնը անցուցած է գիւղը՝ Ղազարապատ, այժմ իսահակեան: Նախնական կրթութիւնը ստացած է ծխական դպրոցը, ապա անցած է էջմիածին, Գէորգեան ճեմարան: Քաջալերուած է իր առաջին փորձերուն մէջ բանաստեղծութեանցի Յովհաննէս Յովհաննէսեանի կողմէ:

Հետեւած է Լայպցիկի Համալսարանի փիլիսոփայութեան դասընթացներուն: Հոն է որ հիմնաւորապէս ծանօթացած է Համաշխարհային մշակութի մեծագոյն կերտուածքներուն, տարբեր ժողովուրդներու ստեղծագործութեանց՝ «Ֆոլքլորին»: Պոտած է շատ երկիրներ, եւ շատ բան սորված Եւրոպայէն: Իր մեծագոյն ուսուցիչը սակայն, եղած է մայր հողը, անոր ժողովուրդը՝ իր երգերով, հարուստ ոճերով, կեանքով, սովորութիւններով:

1927-ին այցելած է Հայաստան, իսկ 1936-ին վերջնականապէս կը հաստատուի հոն: Մինչեւ իր մահը եղած է Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահը: Ընտրուած է Հայաստանի Խորհրդարանի եւ Գիտութիւններու Ակադեմիայի անդամ: Արժանացած է պետական մրցանակներու:

Վախճանած է 1957-ին, խոր ծերութեան մէջ Երեւան:

Ա. իսահակեանի ստեղծագործութեան հիմնական թեմաները կը հանդիսանան սէրը, մայրը, հայրենիքը իր բնութեամբ եւ ժողովուրդով: Ան նաեւ խորհող, փիլիսոփայ գրող է, եւ լուջողութեամբ եւ գեղեցկութեամբ նկարագրած է աշխարհը, գեղեցիկը, կեանքը, մահը, անմահութիւնը:

Իսահակեանի գլխաւոր գործերը՝ քերթուած, արձակ, պոէմ, վիպաչունչ էջեր, համադրուած են՝ «Աշնան Ծաղիկներ», «Սասնայ Մհեր», «Աղա Նազար», «Արձակ էջեր», «Իմ Յուշերից», «Ուստա Կարոյ եւ Օրթէ Յարութ» խորագրուած հատորներու մէջ, իսկ «Աբու Լայա Մահարի» պոէմը, փիլիսոփայական կոթող մըն է, հայ գրականութեան գագաթներէն մէկը, լայն ժողովրդականութիւն գտած գործ մըն է որ թարգմանուած է բազմաթիւ լեզուներու:

է եղել կազմելու «Սպիտակ Գիրք» անուան տակ մի ծանրակշիռ հատոր, որի համար նա ժամանակին մանրակրկիտ կերպով գրել էր, հաւաքագրել էր ջարդից փրկուածների պատմութիւնները, դրուագներ հայ ազատամարտից, լուշեր կապուած հայ հերոսների հետ, նա պէտք

ուղղութեան մէջ հնարաւորութիւն ունեցաւ ասելու իր խօսքը եւ պէտք է ասել, որ հայ արձակի անմար գոհարներից են այնպիսի գործեր, ինչպէս «Սաադի Վերջին Գարունը», «Համբերանքի Չիբուխը», «Աղադալին Երգը», «Անպարտուելի Հոգին», «Չինգիզ Ռանը», «Լիլիթ»-ը:

դու Գրեմբեցի ես, ես ծնունդ եմ
Երեւան, մայրս՝ Կոստանդնուպոլիս,
հայրս ծնունդ է Քիֆֆիսում, իսկ
տատիկս՝ Շուշի (Ղարաբաղ) ապա ես
որտեղացի՞ եմ: Նա ասաց՝ զաւակս,
եթէ ձիու ախտում ծիծեռնակը
բոյն դնի եւ ձագուկ ծնի, դա ի՞նչ
է, ծիծեռնակ է թէ՛ ձի: Ասացի՝ որ
ի հարկէ դա ծիծեռնակ է, ասաց՝
տես, որ դու գրեմբեցի ես, հենց նոյն
տրամաբանութեամբ պէտք է ար-
տաշարտել, որ իսահակեանն էլ Ղին
Բայազետցի է, այսինքն պարսկահայ է:

Տեսնում ենք, որ մեր կապերը
հին են եւ պէտք է ասեմ որ
իսահակեանը մի կողմից իր ստեղ-
ծագործութեան մէջ շարունակելով
հայ միջնադարի՝ Նարեկացու ապա
եւ Քուչակի, Տրիկի, Սալաթ Նովայի
հանճարեղ աւանդները, միւս կող-
մից նաեւ իր ստեղծագործութեան
մէջ միշտ կրել է մեծ Արեւելքի
ապոկեյութիւնը, Արեւելքի մեծ պո-
էզիայի ազդեցութիւնը, լինի դա
Ֆիրդուսի թէ Մաագի, լինի Օմար
Խայամ թէ Ռուղաբի եւ նամանա-
ւանդ Արուսայա Մահարի: Մահա-
րին աւելի շատ նրա աշխարհահայ-
եացքի վրայ է, ի հարկէ ազդել, քան
թէ նրա ստեղծագործութեան: Այս
ստեղծագործութիւնը վառ արեւել-
եան է՛ւ իմաստութիւնն է, է՛ւ խո-
րութիւնն է է՛ւ պոէզիայի հրաշալի-
քը, որ յատուկ է միայն Արեւելքին՝
ճոխութիւնը, գեղեցկութիւնը, զգալ-
նութիւնը, ի հարկէ իսահակեանը,
ինն թաւած է, չաջողեց անել այն, ինչ
որ Երեւի գէշքով չեն կարող անել
մեծ գործարարները՝ Նափոլչոնից
սկսած: Նա իր ստեղծագործու-
թեամբ միացրեց Արեւելքը եւ Արեւ-
մուտքը: Միւս կողմից նաեւ որպէս
մեծ փիլիսոփայ եւ մեծ մտածող,
նրա ստեղծագործութեան մէջ ու-
ժեղ է կնիքը կեթթէի, Հայնէի, Նի-
ցչի եւ դասական արեւմտաեւրո-
պական բանաստեղծութեան Պայրը-

Ե՛ւ հարեւակցական դասերը, է՛ւ
ինչ-որ հոգեբանական կապերը երե-
ւի իրենց իմաստը տալիս են, եւ
ստեղծական ծաղկումը անշուշտ:
- Խնդրեմ պատմէք ձեր յուշերից:
- Միբով, դեւ արդէն ձօնաւո-
րապէս 10-12 տարեկան հասակից
իսահակեանը նկատեց իմ հետաքրք-
րութիւնները՝ դրքերի հանդէպ եւ
առաջին նուէրը, որ տալիս էր
հիմնականում դրքեր էին լինում եւ
ես շատ էի սիրում կարդալ: Ես հենց
մեծացել եմ թէ՛ նրա գրուած քնքերի
եւ թէ՛ նրա գրադարանի հաւաքա-
ծոյցի վրայ: Երբ 11-15 տարեկան էի
իսահակեանը նոր էր մահացել եւ
մեր տուն գալիս էին գրականագէտ-
ներ եւ պատրաստում էին սոցադրու-
թեան, նրա երկերի հերթական հա-
տորները... մեր սան մեծ աշխատա-
սկնակում (մինչեւ թանգարանին
անցնելը) լցում էին իսահակեանի
ձեռագրերը եւ մանաւանդ տատիկս,
որ 50-տարի ապրել էր իսահակեանի
հետ, կարծես իր միտքարտիւնը,
լնկերոջ կեանքից հեռացումից յե-
տոյ, գտնում էր մեծ հօրս ձեռագ-
րերը նայելով, կարդալով... եւ ահա
ես ինքս սկսեցի կարդալ, պրպտել եւ
ընտելանալ ինն հետաքրքրում
էին այն երկերը՝ որոնք անտիպ էին,
մի խօսքով եւ իսահակեանի ձեռագ-
րերի աշխարհում եմ մեծացել: Երբ
առաջին անգամ համալսարանում
պէտք է պաշտպանէի աւարտական
թէզը, վերջերցի մի թէ՛մա կապուած
իսահակեանին եւ նրա վերաբեր-
մունքը հայկական Յեղասպանու-
թեանը առաջին համաշխարհային
պատերազմի տարիներին եւ նրա
արձագանգը երկրորդ պատերազմի
տարիներին, երբ որ մեր առջեւ
կանգնած էր հին թշնամին, յանձինս
թուրքերի ջարդը օժանդակող Գեր-
մանիայի, ահա այդտեղ ես շատ
հետաքրքիր գրառումներ դտայ,
իմացալ, որ իսահակեանը ծրագրած

ուած հայ հերոսների հետ, նա պէտք
է լինէր մի հակաշահան մեղադրա-
կան գիրք՝ մեր ժամանակի նոր
«Մատեան Ողբերգութեան»: Սա-
կայն գիրքը չէր կարող տպագրուել
այն ժամանակի պայմաններում, ուս-
տի մնաց անտիպ վիճակում, հիմա,
երբ մենք ծրագիր ունենք տպագրել
իսահակեանի երկերի լիակատար
ժողովածուն, «Սպիտակ Գիրքը» կը
գտնի իր սեղը: Դրանից յետոյ ես
Երեւանի Պետական Համալսարանի
ասպիրանտուրայում վերջերցի թէզ
իսահակեանի արձակի թեմայով...
իսահակեանը նաեւ գրական այս նոր

Գրեմբեցի գին», «Ձինգիգ խանը», «Լիլիթ»:
Իսահակեանը Արուսայա Մա-
հարի պոէզի աւարտից յետոյ ձեռ-
նամուխ է լինում սկսելու «Ուստա
Կարօ»-նունով իր վէպը: Այս վէպը
իմ գիտական խնդիրներից մէկն է,
որը ունի երկու տարբերակ, առա-
ջին տարբերակը աւարտել է դեռեւս
1912 թ. Իզմիթում, որի աւարտից
յետոյ ինքը խնդրեց մեկնում է արեւմտ-
եան Եւրոպա եւ ապա շարունակեց
աշխատանքը Ջարդերից յետոյ, վէ-
պը պիտի ունենար ուրիշ աւարտ եւ
Ծար.ք էջ 13



-մտ դիմողսիսի ռիբոմշ :մզ նմտի
զորսնոմշ սցն ուղ :վղտատու վը
իսմզթշո վոտչ 'իվեցեցե :վղտատու
վը Լոզցոտ ՆԻ Լզեուզե մզ հսն
վմոթիխտոդդ :մմւմ մզ Լսեղց
:եզամոն մօջ մվ
տողեմտոզո րսլոդտոսցչ Եզչ Յզամս
'ուվեցրսկոտրսի մզեցոտ Եզվ

ՀՊԵՂԵՅ ՏՎՊՈՂՈ

ՂՈՆԳ ԿԱՉՓ-ԿԱՉՓ ՆԿՂՇՈՂ
ՆԱԴԵՂՁ ԻՎՏՏՍ-ԻՎՏՏՍ ԿԿ

«ԻՍԱՀԱԿԵԱՆՆ ՈՒՆԻ ՊԱՐՍԿԱՀԱՅ ԾԱԳՈՒՄ»

Շարունակուած էջ 12-էն

Եթէ առաջին տարբերակում գուցէ հնարաւոր լինէր մեր ժողովուրդը թուրքի հարեւանութեամբ ապրի եւ յարատեւի, ապա երկրորդ տարբերակում վճռական որոշումն այն է, որ միայն ազատագրուած պէտք է լինի արեւմտեան Հայաստանը, միացեալ Հայաստանը միայն այդպէս կարող է յարատեւել իր կազմում ունենալով մեր բոլոր պատմական տարածքները ե՛ւ Նախիջեւանը, ե՛ւ մանաւանդ Լեռնային Դարաբազը:

-Եթէ հնարաւոր է բացատրո՞ք վարպետի անաւարտ գործերի եւ ապագայ հրատարակութիւնների մասին:

-Եթէ մինչեւ օրս իսահակեանի երկերը տպագրուել են վեց հատորով եւ մէկ էլ առանձին «Յիշատակարան» գիրքը, ապա պէտք է ասեմ, որ մեր վաղուց ի վեր ծրագրած իսահակեանի երկերի լիակատար գիտական ժողովածուն պէտք է ունենայ 14 հատոր, այստեղ երկու հատոր կը կազմեն «Ռուտա կարօ» վէպի երկու տարբերակը եւ վէպի վերաբերեալ նրա գրառումները: Իսահակեանը լինելով մեծ ստեղծագործող քնականաբար ունեցել է իր ստեղծագործական լաբորատորիան, որտեղ են իր ծոցատետրերը եւ օրագրերը, դրանց հաւաքածոն եւ դրանց առանձին տպագրութիւնը կարծես նրա հանճարեղ մտքի գրառումներն են, նրա գաղափարների եւ ոգեւորումների արձանագրութիւններն են, որոնք ունեն թէ մեծ փաստագրական եւ թէ նաեւ գեղագիտական արժէք, նմանը կը կազմի մէկ առանձին հատոր:

գաքի մահուան վերաբերեալ, Օմար Խայամի մասին, Ֆիրդուսու մասին:

Ասածս արդէն «Սպիտակ Գիրքը» մեր հերոսամարտի եւ հայկական Յեղասպանութեան վաւերագրական պատմութիւններն է, գրողի ձեռքով գրուած, դրա կողքին նրա մեկնարանութիւնները, դէպքերի իր գնահատականները...

Իսահակեանը որտեղ որ չի եղել նրա սիրելի թէ՛ խօսակից ընկերը, իր մխիթարանքը եւ կապողը իր ընկերների եւ ընտանիքի հետ եղել է նամակը: Իսահակեանի նամակը սոսկ նամակ չէ, այլ հանճարեղ ուղեղի իւրովի արձագանգը, իւրովի պարկերը, չկայ մի նամակ, որտեղ գոնէ մէկ այսպէս իսահակեանական փայլուն տող չլինի, նրա նամակներին կը տրուեն երկու առանձին հատորներ: Մի հատոր եւս կը յատկացուի լրիւ ամբողջութեամբ իսահակեանի հայրենասիրական երգերին եւ մտորումներին: Իսահակեանի ժառանգութեան մէջ նաեւ մեծ տեղ է գրաւում «Մասսա Մանուկ» անուամբ անտիպ պոէմը, որը ամբողջութեամբ 4000 տող է: Ինձ թւում է, որ այդ ստեղծագործութիւնը նոյնպէս մեծ նշանակութիւն ունի մէր ժողովուրդի համար, որը տաանեակ ասորիներ անց, դարձեալ ազգային անկախութեան ճանապարհին է գտնուում: Ինչպէս տեսնում ենք շատ եւ շատ են իսահակեանի անտիպ գործերը, սեւագրութիւններ, պատանեկան օրերի գրական գործեր եւ այլն: Եթէ Ազգային Ակադեմիան սկսի 14 հատորների տպագրութիւնը երեւի 2000 թ. ապա կ'աւարտուի 2010 թ.:

բանաստեղծների, երգիչների, արուեստի վարպետների եւ ասմունքողների: Ես ծրագիր ունեմ յառաջիկայում հանդիպում ունենալ իրանահայ մտաւորականութեան հետ եւ կ'ուզէի, որ իսահակեանը լինէր իւրովի կապող մի օղակ, մեզ Պարսկաստանի դասական գրականութեան եւ աւանդների հետ:

-Պրն. Իսահակեան եթէ հնարաւոր է պատմե՞ք նաեւ ձեր ընտանիքից:

-Իսահակեանը ունեցել է միայն մէկ զաւակ, դա հայրս՝ Վիգէն Իսահակեանն է, որը ծնուել է 1910 . Թիֆլիսում եւ այժմ կենդանի է եւ շատ առողջ եւ լաւ լիչողութիւն ունի, վերջերս էլ աւարտել է հօր մասին յուշերի գիրքը, որը նոյնպէս ծրագրում ենք 2000 թ. տպագրել: Ես ամուսնացած եմ մեծ նկարիչ Մարտիրոս Սարեանի թոռան, Ռուզան Սարեանի հետ եւ ունեմ երկու երեխայ՝ Մարտիրոսը եւ Բելան: Իսահակեանը եւ Սարեանը ընկերութիւն են արել 1903 թ.: Վերնատանը յաճախ է եղել, որ հաւաքուել են մեր մեծերը՝ Սարեանը... Աւետիք Իսահակեանը: Ո՞վ գիտի անցել է նրանց մտքով, թէ մի օր կը գայ եւ նրանք կ'ունենան ընդհանուր ծոռներ, ինչպէս որ հիմա իմ զաւակներն են: Կինս բանասէր արուեստագէտ է եւ աշխատում է Ակադեմիայի Արուեստի Ինստիտուտում եւ հետաքրքրի մի գիրք է պատրաստել նուիրուած Սարեանի նամակագրութեանը: Նոյն 2000 թ. լինում է Սարեանի 120 ամեակը եւ եթէ ես Պարսկաստան գամ, ապա կը գամ կնոջս հետ, նա էլ հետաքրքիր դասախօսութիւն կը կարդայ:

-Մեզ համար շատ հետաքրքիր է պատմե՞ք, թէ վարպետը ի՞նչ վերաբերմունք ունէր հանդէպ երիտասարդութեանը, մանաւանդ, համոռու սափ երե-

տասարդները, որ կ'ուզէին ապագայում յայտնի բանաստեղծներ դառնալ:

-Ես լիչում եմ, որ դեռ բաւական մեծ տարիքի մէջ Իսահակեանը շատ սիրում էր գնալ գիւղական դպրոցները, գնար լսելու նրանց երգը, արտասանութիւնները, երեխաների մէջ էր տեսնում մեր ազգի գալիքի ապաւէնը, մեծ հաւատք ունէր հայ երիտասարդութեան հանդէպ: Հայ մարդու կարծես թէ հաւատամքն է, մեր ազգային պատկանելիութիւններից, ազգային ձեւերից մէկը՝ գիտելիքներ ձեռք բերելն է, աշխարհի որտեղն էլ գտնուի:

Պէտքութեան երիտասարդ մի տղայ գրել էր Վարպետին, որ «ուզում եմ գալ հայրենիք, ինչքան եմ ասէք, ո՞րն է Հայաստանի տան բանալին», եւ իսահակեանը նրան պատասխանել էր. «Հայաստանի տան բանալին հայոց լեզուն է, լաւ սովորիւ հայոց լեզուն եւ հայրենիքի բոլոր դռները քո առջեւ բաց կը լինեն»: Նա նաեւ հետեւում էր երիտասարդ գրողների ստեղծագործութիւնները, խրատներ էր տալիս շատ շատերին: Իր համեմատ երիտասարդ սերունդ էր եւ Շիրազը, եւ Միլիա կապուտիկեանը, Վահագն Դաւթեանը, Համօ Մահեանը, Հրաչ Յովհաննիսեանը, Պարոյր Սեւակը, դրանց բոլորի համար նա մեծ ուսուցիչ էր եւ մարդ, որին նրանք անչափ հաւատում էին: Նա սիրում էր գրօսնէր, տեսնէր երիտասարդ սերնդին, էլի եմ ասում, դրա մէջ տեսնելով մեր ազգի ապագայի ապաւէնը:

-Սիրելի Աիկ, կրկին անգամ շնորհակալութիւն յայտնելով, յոյս ունեմ շուտով մեր իրանահայ համայնքը կը հիւրընկալի Ձեզ եւ Ձեր յարգելի ընտանիքին հայոց խօսքի եւ արուեստի մեծ ստեղծագործներին:

